

ՎԻԼՀԷԼՄ ԿԱՅՍՐԸ ՊԱՇՏՊԱՆ ՀԱՄԻՍԼԱՄՈՒԹԵԱՆ

La Revue-ի յունիսի 1, № 11-ում պ. Ալեքսանդր Իւլար, որ ամբողջ Արեւելքի և առ հասարակ ասիական գործերում ֆրանսիական հանդէսի ձեռնհաս ու հեղինակաւոր աշխատակիցներից մէկն է, «La Weltpolitik allemande et le monde musulman»—Գերմանական համաշխարհային քաղաքականութիւնը եւ մահմեդական աշխարհը—վերնագրով մի հետաքրքիր յօդուած է գրել, որը ներկայացնում ենք մեր ընթերցողներին փոքրիկ կրճատումներով:

Յօդուածագիրը նախ հաստատում է, որ մեծ պետութիւնների «համաշխարհային քաղաքականութիւնը», որին պարտական է մարդկութիւնը արդէն չորս պատերազմ, որքան անբարոյական, նոյնքան արիւնոտ—ինչպէս Սպանիայի ջախջախումը Միացեալ Նահանգների կողմից, Տրանսվալի գրաւումը, Չինաստանի վրայ արշաւանքը, և ուսմ-ճապոնական պատերազմը—և որը, ապագայում, ուրիշ նոր ու սարսափելի աղէտների դուռ պիտի բանայ, այդ քաղաքականութիւնը Գերմանիայի հնարած բանն է, եթէ ոչ իրապէս, գոնէ անունով (Weltpolitik): Եւ հետաքրքիր է այն, որ այդ քաղաքականութեան ձգտող հինգ պետութիւններից—Անգլիա, Ֆրանսիա, Ռուսաստան, Միացեալ-Նահանգներ և Գերմանիա—հէնց վերջինն է, որ մինչև այժմ, զերծ է մնացել այդ քաղաքականութեան վտանգաւոր հետեանքներից, աւելի քան միւսները: Իր գերազանցօրէն հակակրեւի ձգտումները թագցնելու, աշխարհակալութեան և տիրապետութեան իր անդրդուելի միտքը ծածկելու համար, Գերմանիան ամեն կերպ աշխատում է համոզել թէ իր դաժան դրացիները նրան զրկել են, թէ թոյլ չեն տալիս որ «բնական կերպով զարգանայ» և դիմացն ելնողին կրկնում է, թէ նա ձգտում է միայն մի փոքրիկ «տեղ ձեռք բերել արևի տակ»—Platz an der Sonne—ուր իր երջանիկ մրցակիցները՝ մանաւանդ Անգլիան և Ֆրանսիան, բարձր ի գլուխ ման են գալիս: Գերմանական Weltpolitik-ը սակայն պ. դր Վիտտէի, ուստ պետական գործիչի ընդունումն

համաձայն կայանում է «յամաուութեամբ և նենգութեամբ խառնուել այն բոլոր բաներում, որոնք ձեզ չեն վերաբերում, այլ վերաբերում են ուրիշներին և շատ մօտից»

... Աւանդութիւն, ճարպիկութիւն կամ անկարողութիւն, մարոկկեան հարցը յարուցուեց մի այնպիսի բողոքում, ուր անկասկած յամառ կերպով միջամտութիւնից հետո մնալը՝ Գերմանիային միանգամ ընդ միշտ կորցնել պիտի տար «արևի տակ ցանկացած տեղը» իւրացնելու առիթը։ Նրանք, որ Ֆրանսիայում զեռ ևս կարծում են թէ այժմեան բարդութիւնները արդիւնք են Կայզրի մի յախուռն ու անխորհուրդ քայլին, մոռանում են տնտեսական, և եթէ համարձակուէի առել, բարոյական ծաւալման այն անսահման աշխատանքը, որ Գերմանիան կատար է ածել վերջին տասը տարիներին ընթացքում, ապահովելու համար իրան միջազգային մի այնպիսի դրութեան հանդէպ, ուր գտնւում է այժմ Եւրոպան։ Եւ նրանք որ, Ֆրանսիայում—որովհետև Անգլիայում և Գերմանիայում կարողանում են աւելի հեռունքներ տեսնել—անկեղծօրէն համոզուած են մնում, թէ յարուցուած հարցը մի ֆրանկո-գերմանական վէճ է և բացի Մարոկկոյից ուրիշ ոչ մի շարժառիթ չունի, անկասկած մոռանում են գերմանական Weltpolitik-ի ընդհանուր ոգին, որի համար Մարոկկոյի հարցը մի պարզ պատրուակ է։

Երբ Բիսմարկը արհամարհական ձևով յայտարարեց, որ արևելեան բոլոր հարցերը պոմերանական մի զինուորի ոսկորներն անգամ չէին արժենայ, տիեզերական գերակշռութեան պրոբլէմը, որը նա ուզում էր լուծել ի նպաստ Գերմանիայի, այն ժամանակ ամփոփուում էր Եւրոպայում գերակշռութիւն ձեռք բերելու հարցի մէջ։ Այնուհետև, Բիսմարկից Բիւլով, Կլերգըն և Վիտտէ, աշխարհը նոյնքան «առաջադիմութիւն» կատարեց, որքան Պէրիկլէսից Բիսմարկ։ Բայց բիսմարկեան աւանդութիւնը այնքան զօրեղ է եղել Գերմանիայում, որ երկար ժամանակ, կարողացել է անդամալուծել կառավարութիւնը՝ որ հասկացել էր փոփոխութիւնը՝ ժողովրդի հանդէպ, որը չուզեց հասկանալ։ Երկու տեսակ փաստեր բաց արին սակայն ժողովրդի աչքը։ Մի կողմից երկրի արագ արդիւնաբերութիւնը պահանջում էր հարկաւորապէս նոր շուկաներ։ Միւս կողմից նոր շուկաներ գտնելու շանք նուազում էր այն չափով՝ որով գաղութային պետութիւնները, մասնաւորապէս Անգլիան և Ֆրանսիան, մեծացնում և փակուած էին իրանց անդր-ծովեան կայսրութիւնները։ Գերմանիան այս դէպքում գտնւում է այն դրութեան մէջ, ուր գտնւում էր Անգլիան յիսուն տարի առաջ, այն տարբերութեամբ սակայն, որ, այժմ, նոյնքան յաջող կերպով ըն-

դարձակուելու համար Գերմանիան իր առաջ ունի անհունապէս աւելի մեծ, եթէ ոչ անյաղթելի, դժուարութիւններ:

Այն հարցը՝ որ Գերմանիան տալիս է ինքն իրան՝ կարելի է վերածել հետեւեալ միակ նախադասութեան. Աշխարհը արդեօք երկու Անգլիայի համար բաւականաչափ մեծ է: Եթէ այո՛, պէտք է որ ոչ Անգլիան և ոչ էլ մի ուրիշը արգելք դառնայ Գերմանիային ձեռք բերելու համահաւասար տնտեսական կայսրութիւն. պէտք է որ ոչ Անգլիան և ոչ էլ մի ուրիշը իր տնտեսական ազդեցութեան շրջանը չմեծացնէ ի ֆրանս Գերմանիայի ապագայ կարիքների. պէտք է որ մանաւանդ դեռ ևս մրցակիցներէց վերջնականապէս չիւրացրուած երկրների ճակատագրի վերաբերեալ հարցերում Գերմանիան ձայն ունենայ, և տիրապետող ձայն: Ապա թէ ոչ պէտք է որ անգլիական կայսրութիւնը կործանուի:

Ի հարկէ Գերմանիայում ոչ ոք չի ընդունի երբէք որ հարցը այդքան պարզ է և կարելի է այդքան բրտօրէն լուծել... Ահա այն համոզումը, թէ ուշ կամ կանուխ, աշխարհը երկու Անգլիայի համար չափազանց փոքր պիտի լինի, զսպում է Գերմանիայի եռանդը և նրա քաղաքականութեան տալիս է խաղաղ, տնտեսական նուաճումների ձևը: Գերմանիան աշխատում է «հնդկական կայսրութիւն»-ը ստեղծել Չինաստանում և իր «Եգիպտոս»-ը Միջագետքում¹⁾: Այդ հսկայական նպատակի իրագործման համար, անկարելի է ուրանալ, որ նա գործ է դնում շատ աւելի մեղմ միջոցներ քան Անգլիան և Ֆրանսիան՝ իրանց անդր-ծովեան կայսրութիւնների կազմութեան համար: Բայց—և այս այն կէտն է, որ այս բոլորիս, կարող է դառնալ ամենածանր դէպքերի որոմը—նա գործում է այնպիսի եղանակներով, որոնք նախապէս անգորութեան են մատնում իր միակ լուրջ հակառակորդների՝ Անգլիայի և Ֆրանսիայի՝ ապագայում, ի պահանջել հարկին, նրա դէմ հանելիք ընդդիմադրութեան միջոցները:

Մի կողմ թողնելով Հեռաւոր-Արեւելքը, գերմանական Weltpolitik-ը ամփոփուում է այս միակ խօսքի մէջ, որը լուսաբանում է և՛ մարոկկեան բարդութիւնների թագուն երեսները, և բալկանեան դործերի խճճուած դրութիւնը, և՛ անգլո-գերմանական և ֆրանկո-գերմանական հակառակութիւնը ամբողջ Արեւելքում մինչև Հնդկաստան—գերմանական համիսլամութիւնը:

1) Այս և միւս ընդգծումները մենք ենք արել:

Հաւատացեալների պաշտպանը

Պէտք է բով-քովի դնել Weltpolitik-ի այս ընդհանուր դա-
դափարը և այն սկզբունքները, որ վարում են անգլիական
գործունէութիւնը Արևելքում, ըմբռնելու՝ այն աւագ կարևորու-
թիւնը, որ ունի Գերմանիայի համար, մահմեդական աշխարհի
բարեկամութիւնը: Անգլիական զօրութիւնը՝ Գահիրէից մինչև
Դէլի՝ յենուում է ամբողջապէս—ինչպէս արդէն բացատրեց
Revue-ն իր 1905, փետրուար 1-ի համարում—այն աւելի
կամ պակաս բարեկամական յարաբերութիւնների վրայ որ
Անգլիան կարող է սնուցանել մահմեդական աշխարհի հետ: Եւ
ամրապնդումը բրիտանական անսահման կայսրութեան, որ
պէտք է տարածուի Սահարայից մինչև Հիմալայեա—որի հա-
մար աշխատում է Անգլիան որքան ճարտարութեամբ նոյնքան
եռանդով—կարելի է միայն այն ժամանակ, երբ Անգլիան
կը յաջողի իրան ընդունել տալ մահմեդական աշխարհի իբրև
պաշտպանը: Արդ, թէպէտև Անգլիան շնորհիւ իր անժխտե-
լի տիրապետութեան Հնդկաստանում և Եգիպտոսում, ներկա-
յումս մահմեդական ամենամեծ պետութիւնն է, հաւատացեալ-
ների ճշմարիտ պետը, բայց իսլամութեան կրօնական և քաղա-
քական ըմբռնումների համեմատ՝ խալիֆան է և կը մնայ սուլ-
թանը: Անգլիայի ամբողջ շահը պահանջում է ուրեմն որ այս
վերջինի ազդեցութիւնը փշուր-փշուր լինի: Նա կարողանում է
քաջալերել զաղանապէս բոլոր ապստամբութիւնները, անկա-
խութեան ամեն ձգտումները այն զանազան ժողովուրդների, որ
դժկամակութեամբ կրում են թիւրք լուծը: Այն հետզհետէ վը-
տանգաւոր, խալիֆայի իշխանութեան համար հետզհետէ ա-
ղիտաբեր ապստամբութիւնները, որ տարիներից ի վեր արա-
բական թերակղզին դարձնում են անդադրում պատերազմների
թատերաբեմ՝ Անգլիային յոյս են ներշնչում, որ մի օր, Իս-
լամի սուրբ քաղաքները Մէդինէն և Մէկկան սուլթանի իշ-
խանութիւնից պիտի դուրս գան: Նա այդ նպատակով լարել է
ամենախորամանկ ինտրիգները սրբազան վայրերի պաշտպան
հոչակել տալու համար Եգիպտոսի խղիվին: Սուլթանը, կար-
ծում են, այն ժամանակ կը կորցնէր իր հոգևոր իշխանութեան
մնացեալ մասը ի նպաստ Անգլիայի, որ կը ղեկավարէր խղիվի
գործունէութիւնը:

Եթէ այս ծրագիրը իրագործուէր Անգլիան կարող էր
արդարև անյողդողդ անդորրութեամբ դիմագրաւել իր հակառա-
կորդների մեքենայութիւնները: Ամենասարսափելի աղէտը որ
կարող էր հարուածել նրան՝ Հնդկաստանում մահմեդականների

ապստամբութիւնը՝ ապահովաբար համարեա անկարելիութեան մատնուած պիտի լինէր։ Եւ միեւնոյն ժամանակ անգլիական ազդեցութիւնը Սուրիայում, Փոքր-Ասիայում և Միջագետքում նոյն իսկ, ապագայ «Գերմանական Եգիպտոս»-ում, կը սպանէր գերմանական կայսրութեան փառահեղ ապագան, որը—հմրկ է արդեօք յիշեցնել, հակառակ ամեն տեսակ ժխտումների—պէտք է տարածուէր երկու կողմերում մի վաճառականական երակի Կ. Պոլսի միջոցով՝ կապելով Ռոտտերդամը Պարսկական ծոցի հետ։

Արդ, գերմանական և անգլիական երազների անհաշուութիւնը ակնյայտ է։ Եթէ Անգլիան կարիք է զգում իր խղիվի հոգևոր իշխանութեան, ոչ միայն հակազդելու համար իր մրցակիցների քաղաքականութեան, ոչ միայն ապահովելու համար Միջերկրականի և Հնդկական ովկիանոսի միջև տարածուած երկրների իր տիրապետութիւնը, ոչ միայն ամրապնդուելու համար Եգիպտոսում և Արաբիայում, այլ նաև պահպանելու համար իր ստացուածքը, Հնդկաստանի իր հրաշալի կայսրութիւնը։ Գերմանիային մնում է ապահովել իր սուլթանին քաղաքական զօրութեան և կրօնական իշխանութեան բարձրագոյն ուժը՝ արժանանալու համար նրա երախտագիտութեան, ձեռք ձգելու համար՝ ի ֆուս Անգլիայի, տնտեսական այն բոլոր արտօնութիւնները, որ մի միապետ կարող է տալ, դառնալու և մնալու համար տէրը այն մեծ ճանապարհին, որ կապում է Միջերկրականը Պարսկական ծոցի հետ, վարելու համար գրեթէ նոյնքան տիրապէս որքան Անգլիան Եգիպտոսում կամ Հնդկաստանի հարկատու ընդարձակ պետութիւններում, շահագործումը, տնտեսական կառավարութիւնը այն Միջագետքին, որ ծրնունդ է տուել ամենավաղեմի քաղաքակրթութիւններին և որ, դարերով ու դարերով ամբողջ աշխարհի ամենահարուստ հացահատիկի ամբարանոցն է եղել։ Աւելին կայ. Թիւրքիան անուանապէս անկախ, գերմանական խնամակալութեան տակ զօրեղացած՝ իր վերանորոգուած հարստութեամբ, զինուորական ուժով, հոգևոր իշխանութեամբ աւելի մեծ ազդեցութիւն պիտի գործ դնէ մահմեդական աշխարհի վրայ։ Եգիպտոսը որ ակամայ յարում է անգլիացի աշխարհակալին, և մանաւանդ մահմեդական Հնդկաստանը որը հաւատարիմ է նրան, որ ամենից ուժեղն է, խորապէս պիտի յուզուին և եթէ Թիւրքական համիւլամութիւնն էլ (որ անյաջողութեան մատնուեց սուլթանի պրէստիժի պակասի պատճառով) սկսէր սիստեմատիկաբար գործել նրանց մէջ, այն անսահման միջոցներով՝ որ պիտի ընձեռէր Գերմանիան, բրիտանական ամբողջ կայսրութիւնը կարող էր այն ժամանակ խիստ վտանգաւոր կերպով

դրդալ, առանց որ Գերմանիան պէտք ունենար մի բաց արձակ կուռի աղէտներին մատնուելու:

... Գերմանական թէզը, մի խօսքով, շատ պարզ է. պէտք է զօրացնել Թիւրքիան ամեն կողմից եւ ամեն միջոցներով, օժանդակել ամենուրեք Իսլամի քաղաքական վարդապետութեան, որի համեմատ մանսեղական ո'չ մի ժողովուրդ պէտք չէ կառավարողի անհաւատների կողմից, վարել տնտեսապէս այն երկիրները որ հպատակուած են սուլթանին, եւ տկարացնել եւրոպական միւս պետութիւնների դիրքը իրանց մանսեղական գաղութներում: Այս թէզը պարունակում է եւ մի փոքրիկ յաւելում, որի կարեւորութիւնը այժմ աչքի է խփում: Որքան ժամանակ որ Արեւելքի ճանապարհը՝ Տրիէստից կամ Սալոնիկից՝ Գերմանիայի ազատ տրամադրութեան տակ չըլինի—սրա համար երեւի նա ստիպուած է բաւական երկար սպասել—հարկաւոր է որ Գերմանիայի ծովային ուղին՝ Միջերկրականի արեւելեան աւազանում, իր հակառակորդների ձեռքին չլինի բացարձակապէս: Թիւրք կայսրութեան մէջ իր ձգտումներով, իր Weltpolitik-ի հիմնական գաղափարով՝ Գերմանիան Միջերկրական ծովային պետութիւն է այնքան, որքան Անգլիան, այն միակ տարբերութեամբ սակայն, որ բրիտանական կայսրութիւնը թիւրքական ծովափներում հողային կալուածքներ ունի արդէն, մինչդեռ տւտոն կայսրութիւնը դեռ եւ բարոյական տիրապետութիւն: Միջերկրականը պէտք չէ որ «փակուի» Գերմանիայի առաջ: Ուրիշ խօսքերով՝ եւ որովհետեւ Զիբրալտարը այլեւ համարեա չի հաշուի ապագայի կոիւններում, պէտք է որ Մարոկկեան ծովեզերքը բացարձակապէս չեզոք մնայ, եթէ երբէք ինքը՝ Գերմանիան՝ այնտեղ մի յենակէտ չհաստատէ իր համար:

Մի անգամ որ ընդունենք այս հարցի կարեւորութիւնը, Մարոկկոյի ներսերում բացի Գերմանիայից մի ուրիշ պետութեան մուտք գործելն իսկ մի շատ աղետաբեր նկարագիր է ստանում Weltpolitik-ի ձգտումների համար: Թիւրքական սուլթանութիւնից դուրս, Մարոկկոն զուտ սիւնի-մահմեդական միակ գերիշխան պետութիւնն է. նա շատ աւելի փոքր է քան խալիֆայի կայսրութիւնը, պէտք ունի աւելի ազդու պաշտպանութեան. և եթէ Կ. Պոլսի և Ֆէզի արքայական ընտանիքները կարող են միմիանց փոխադարձաբար մեղադրել, ըստ Մարգարէի, Իսլամի հարազատ, վաւերական դեկլավարը չլինելու մէջ, այնուամենայնիւ Մարոկկոն մի «իսլամական երկիր է». Մարոկկոյի հոգևոր յարաբերութիւնները մահմեդական աշխարհի կեդրոնների հետ, գոնէ նոյնքան սերտ են, որքան Հընդ-

կաստանի մահմեդականների յարաբերութիւնները, և անկասկած, հարիւր անգամ աւելի սերտ, քան կաթոլիկ զանազան ազգերի միմիանց միջև պահպանած կապը: Երբէք իսլամը չէ հրաժարուել իր քաղաքական վարդապետութիւնից.—բոլոր հաւատացեալների միութիւնը. երբէք չէ հրաժարուել այն հիմնական մտքից, թէ իսլամութիւնը ոչ միայն մի հաւատ է, այլ եւ մի կազմակերպութիւն (organisation), համարեա մի ազգութիւն եւ յամենայն դէպս մի կաստա: Մարոկկոյի և Հնդկաստանի, Ալքանիայի և Սուդանի մահմեդականը կապուած է Թիւրքիայի, Սուրիայի, Հիջազի և Եգիպտոսի իր եղբայրների հետ, երբեմն անգիտակից կապերով, բայց որոնք չափազանց հեշտութեամբ երևան են գալիս արտաքին կեանքում, և յիշեցնում են շատ մօտից աւատըալիացիների կամ կանատացիների զգացումները Անգլիայի համար:

Եթէ Մարոկկոն անհատների ձեռքն ընկնի, ամբողջ մահմեդական աշխարհում դրա արձագանքը շատ ուժեղ պէտք է լինի: Եթէ Գերմանիան թոյլ տայ, որ մի այդպիսի դէպք տեղի ունենայ, իր հմայքը, պրեստիժը մահմեդական աշխարհում և դրա հետ իր արեւելեան քաղաքականութեան սկզբունքն իսկ պիտի ողնջանայ: Նա ցոյց պիտի տայ, ոչ միայն Սուլթանին և իր պաշտօնեաներին, այլ ամբողջ աշխարհի մահմեդականներին, որ անկարող է կատարածել իր խոստումը: Եթէ նա չի կարող փոքրիկ Մարոկկոն փրկել, ի՞նչպէս պիտի պաշտպանէ ուրեմն անսահման խալիֆայութիւնը: Եթէ նա չի կարող դիմադրել անգլիացիներին և ֆրանսիացիներին մի այնպիսի հարցում, որը կարելի էր հեշտութեամբ կարգադրել, ի՞նչպէս պիտի կարողանայ մի այնպիսի խնդրում, որ անմիջապէս շահագրգռում է հարիւր միլիօնից աւելի հաւատացեալներին: Եթէ նա չփրկէ Մարոկկոն, թողնում է այդպիսով և Միջերկրականի մուտքը իր ամենավտանգաւոր հակառակորդներին, նա հրաժարում է Միջերկրական ծովի պետութեան իր դերից. նա խոստովանում է Թիւրքերի, սուրիացիների, եգիպտոսի և ուրիշ տեղերի արաբների, հնդիկների առաջ, որ Անգլիայի և Ֆրանսիայի զօրութիւնը անդիմադրելի է, և ամրապնդում է ի ֆաաս իրան նրանց դիրքը, և նրանց ձգտումներին է ծառայում:

Մարոկկեան հարցը ընծայում է ուրեմն, գերմանական տեսակէտից նոյնքան մեծ կարևորութիւն, որքան Թիւրքական հարցը: Եթէ նա կազմում է ընդհանուր Weltpolitik-ի անուղղակի մասը, յամենայն դէպս նրանից է կախուած գլխաւոր ծրագրի ապագան: Անգլիան և Ֆրանսիան կարծես չեն տեսնում—կամ գուցէ չեն ուզում տեսնել—հարցի մանրամասնու-

Թեան այս կողմը: Բայց Գերմանիան լիօրէն գիտակցում է ապագայի պատահականութեանց ծանրութիւնը. նա խնամքով թաղցնում է այդ՝ նոյնիսկ իր սեփական ազգաբնակչութեան, մեղմելու համար այն հարուածը, որ մի անյաջողութիւն՝ միշտ կարելի՛ պիտի վտանգէր զգալի կերպով իր քաղաքական վարիչներին պրեստիժը: Բայց աղիտարներ կը լինէր, որ Ֆրանսիան և Անգլիան խարուէին իսկական հարցի վերաբերմամբ: Գլխաւորը Մարոկկոն չէ, այլ Թիւրքիան, Նզիպտոսը եւ Հնդկաստանը: Հարցը Մագգէնի (Մարոկկեան իշխանութիւն) մասին չէ, այլ Դալամի: Հարցը Տանժէրի մասին չէ, այլ Միջերկրականի, հարցը Ֆրանկո-գերմանական մի վէճի մասին չէ, այլ գեր-իշխանութեան այն մեծ պրոբլեմի մասին, որ առկա է Գերմանիայի և Անգլիայի միջև, և Ֆրանսիան այս մասնաւոր դիպուածի մէջ, որ կազմում է մի վիթխարի կռուի վահանը, ոչ այլ ինչ է, բայց եթէ այն սալը, ուր խփւում են անգլո-սաքսոնական և տետոնական լախտի հարուածները:

Ահա թէ ինչ է գերմանական թէզը: Գերմանական կառավարութիւնը ինչ որ էլ ասէ—և նա հակառակը պիտի ասէ, թէպէտ ես հիմնւում եմ, նրա ամենահեղինակաւոր ներկայացուցիչների աշխարհայեացքների վրայ—իր թէզից քաղում է մի անողորմելի տրամաբանութեամբ, միակ կարելի եզրակացութիւնը, նա պարտաւոր է գնալ մինչև վերջը, նա անկարող է նահանջելու: Նա խաղում է իր ճակատագրի հետ: Անկասկած նա երբէք չի պատերազմի Մարոկկոյի անունով, այլ իր «արևի տակ մի տեղ»-ի համար. նա պատերազմ պիտի մղէ մի այնպիսի կայսրութեան համար, որպիսին Անգլիան չվարանց աշխարհակալել սարսափելի պատերազմներով: Նա պատերազմ պիտի մղէ Անգլիայի դէմ—եթէ Ֆրանսիան՝ Անդր-Մանշեան իր նոր բարեկամունու (Անգլիայի) քաւութեան նոխազը չդառնայ:

Կրկնում եմ որ ես գերմանական թէզն եմ ցուցադրում. ես նրան չեմ դատում: Պէտք է սակայն համաձայնուել, որ Գերմանիան աշխատում է փրկել Արևելքում իր Weltpolitik-ի կարելիութիւնը, իր համխառնութիւնը, այն գերագոյն ըրպէին, երբ յաջողութեան բաղդը բոլորովին չէ կորած: Ի՞նչ են արդարև արգասիքները, ի՞նչ է այժմեան դիրքը գերմանական համխառնութեան:

Միջերկրականի դուռը

Մարոկկոն, որպէս մահմեդական երկիր Գերմանիայի ուշադրութիւնը գրաւեց մի քանի տարիներից ի վեր միայն... Նոյնիսկ այն ըրպէին, երբ նրա կախարդական ազդեցութիւնը նշանա-

ւոր չափեր էր ստանում Թիւրքիայում, նա դեռ ևս անտարբերութեամբ էր նայում Մարոկկոյի վրայ: Նա Մարոկկոյում, ինչպէս և ամեն տեղ, հետևում էր միայն իր առևտրի զարգացման, ջանալով միմիայն իր խաղաղ աշխատանքի ուժով յետ մղել իր անգլիացի և ֆրանսիացի մրցակիցներին: Նրա յաջողութիւնը միջակ էր լինում: Ներմուծումի չորս գլխաւոր առարկաներից (թէյ, շաքար, մոմ և բամբակեղէն) և ոչ մէկում կարողացաւ գերակշռող դիրք գրաւել... Միևնոյն ժամանակ քաղաքական հարցը, որ յուղւում էր, նրան ընդնշմարել տուեց հաւանականութիւնը՝ այնտեղ հաստատելու ժամանակակից արդիւնագործութեան ճիւղերը և շահագործելու հանքային միջանի հարստութիւններ: Այս շահաւէտ գործերից Գերմանիայի կատարեալ բացառումը արդէն անհերքելի էր թւում: Ֆրանկո-անգլո-սպանիական դաշնագիրը թերին ամբողջացրեց: Տընտեսական հարցի վրայ, Գերմանիան տեսաւ, որ պատուաստւում է մահմեդականների մէջ հմայքի հարցը: Նա անմիջապէս կռահեց այն պատճառները, որոնք մղել էին Անգլիան Մարոկկոն թողնել Ֆրանսիայի: Անգլիան գիտէր, որ Գերմանիան խորապէս պիտի վիրաւորուէր իր թրքասէր քաղաքականութեան մէջ. նա գիտէր նոյնպէս, որ բացի Գերմանիայից, Ֆրանսիայի և Սպանիայի մարոկկեան օրերում հաստատուելը՝ մի շեշտակի հարուած պիտի լինէր գերմանական Weltpolitik-ի սիրելի գաղափարներից մէկին, և ճիշտ դրա համար է, որ նոր համաձայնութիւնը շտապով կայացրուեց Մադրիդի դաշնագիրը ստորագրող միւս պետութիւններից անկախաբար, այսինքն, գերմանական կառավարութեան հայեացքով բացարձակապէս ապօրինի կերպով:

Հարուածը ծանր էր: Թէ՛ նոր դաշնագիրը իսկապէս Մարոկկոն մտցնում է ֆրանսիական կայսրութեան մէջ, դա ոչ մի կասկած չէ ներկայացնում Գերմանիայի համար: «Տնտեսական հաւանականութիւնների» կորուստից, որի պատրուակով նա միջամտում է—կեղծիք որ Ֆրանսիան մի անըմբռնելի անհասկացողութեամբ թւում է ընդունել իբրև իրական շարժառիթ—Գերմանիան շուտով կը մխիթարուէր: Բայց Միջերկրականի դռների անդարձ կորուստը նրան թուաց արդէն անհունապէս անելի ծանրակշիռ:

...Մարոկկոն, թոյլ տուէք ասել, ոչ այլ ինչ է, եթէ ոչ փայտը, որ նետում է Ֆրանսիան, Անգլիայի խաթրու համար, Թիւրքո-գերմանական համիսլամութեան սրունքների մէջտեղ:

Բաղդադի խալիֆան

Թիւրքական համիլամութիւնը վարելու և Միջագետքը մի գերմանական շրջանակ դարձնելու գաղափարը Գերմանիայի կայսեր ուղեղից կազմ և պատրաստ դուրս չեկաւ: Եթէ այդպէս էլ լինէր, նա մեռելութեան պիտի դատապարտուէր, որովհետեւ ազգը ոչ մէկ կերպով պատրաստուած չէր և, պիտի նկատէր մին այն մեծամիտ ցանկութիւններից, որոնց սովոր է համարում Վիլհելմ II-ը: Գերմանիայի արեւելեան քաղաքականութիւնը ընդհակառակը հետեւեց մի ինքնածին, համարեա կրաւորական, անկասկած ընական էվոլյուցիայի: Իրերի ուժովն է որ դիւանագիտական այլեայլ խաղերից նա դարձաւ Weltpolitik-ի մի սխտեմ, և անա հէնց դրանումն է թագնուած վտանգը նրա հակառակորդների համար:

Որքան որ էլ Բիսմարկը արեւելեան հարցերին արհամարհանքով էր վերաբերւում, Գերմանիայի բարեկամութիւնը՝ սկըսած Բերլինի կոնգրեսից, Գերմանիայի ձեռքում մի միջոց էր նեղացնելու համար իր երկու հակառակորդներին զուտ եւրոպական քաղաքականութեան հարցերում: Նա կանգնեցնում էր ոռոտական զօրքերի արշաւանքը Կ. Պոլսի վրայ և տկարացնում էր Ֆրանսական պրեստիժը Մօտաւոր-Արեւելքում, որը գլխաւորաբար յենուած էր—Բիսմարկը այդպէս էր հաւատացած—կաթոլիկների պաշտպանութեան վրայ: Բայց այդ միջոցում թիւրգերմանական յարաբերութիւնները դեռ ևս պարզապէս քաղաքական գոյն էին կրում: Տնտեսական նուաճումների մասին չէին խորհում անգամ: Այնուամենայնիւ «Հիւանդ մարդը» օգուտ քաղեց աշխարհի զինուորական առաջին ուժի բարի տըրամպորութիւններից, բժշկուելու համար նախ և ամենից առաջ, իր զինուորական բարակացաւից: Գերմանական սպայախումբը (état-major) վերակազմեց թիւրքական բանակը և դարձրեց նրան մի սարսափելի գործիք: Իսկ մնացեալ բաներում Գերմանիան խնամքով զգուշացաւ միջամտելու թիւրք կառավարութեան գործունէութեան մէջ, որեւէ կերպով. մի բան, որ մեծ գոհունակութիւն պատճառեց Թիւրքիային, որովհետեւ այս վերջինը ուրիշ բան չէր խնդրում, բայց եթէ անկախ լինել իր գործում: Փինանսական հարցերում, խոհեմաբար Անգլիային և Ֆրանսիային թողնուեց Թիւրքիային հակակրելի դառնալու առաւելութիւնը: Բալկանեան գործերում, Գերմանիան մեռած ձեացաւ: Հայաստանի գործերում, նա բանն այն աստիճանին հասցրեց, որ Գերմանիայում ճնշեց նոյնիսկ այն ցոյցերը, որոնք կարող էին

գերմանացիներին՝ սուլթանի աչքում նոյնքան հայասէր ցոյց տալ, որքան անգլիացիներն ու ֆրանսիացիները: Մի քանի հազուադէպ բացառութիւններով՝ գերմանական մամուլը հայերին մեղադրեց, թիւրքերի յատկութիւնները փառաբանեց և ապացուցեց կոտորածների համարեա անհրաժեշտութիւնը: Կառավարութիւնը խստիւ դատապարտեց ձեռնարկները մի քանի զգալուն անձերի, որոնք առաջարկում էին հայ զոհերի ի նպաստ հանգանակութիւն բաց անելու եւ երբ յոյն-թրքական պատերազմը ծագեց, Գերմանիան ինչպէս իր սեփական յաղթանակներով, սուլթանի յաղթութիւններով հրճուեց. յաղթանակներ, որոնք, իսկապէս, ձեռք էին բերուած հնորհիւ Բերլինի սպայախումբի և էսսէնի թնդանօթների: Խեղդեցին այն համակրանքները, որ ցոյց էր տալիս (զուտ համալսարանական աւանդութիւնով) գերմանական ժողովրդի մի մասը գէպի յոյները, «գիտական» ապացուցումների մի անվերջ շարքով, որոնք հաստատում էին թէ ժամանակակից յոյները նախկին յոյների հետ ոչ մի արմատական կապ չունին, թէ նրանք խառնածնութեան արդիւնք են ալբանացիների և սլաւների, և որ, հետեաբար, արեւմտեան այն ժողովուրդները, որ յանուն Հոմերոսի կամ Պղատոնի անուանարկում են թիւրքերին, դառնում են կատարելապէս ծիծաղելի:

Անգլիացիների և ֆրանսիացիների դիրքը—որովհետև պաշտօնական Ֆրանսիան Ռուսաստանին դերի դարձած՝ Բերլինում զուրկ էր համարումից—հայկական և յոյն-թրքական ղեպքերի հանդէպ, պաշտօնական Գերմանիայի աչքում ստանում էր ոչ բարեկամական տրամադրութիւնների կերպարանքը: Այն պաշտպանութիւնը՝ որ Բերլինը շուայում էր Կ. Պոլսին, իսկոյն դրանից յետոյ աւելի բորբոքուեց: Միևնոյն ժամանակ թիւրքիայի ընդհանուր դերի մասին, մամուլում—շատ աւելի բարձր այս տեսակէտով ֆրանսիական մամուլից—կատարուած եռանդուն, խորը վիճարանութիւնները արձագանգ էին գտնում ամբողջ Գերմանիայում: Շուտով ամեն մարդ ըսկսեց հետաքրքրուել Արևելքով: Ինչ որ մինչև այն ժամանակ թւում էր մի հեռաւոր երկիր՝ ճանաչուած միայն իր գարշելի վարչութեամբ, դարձաւ հրաշալիօրէն հարուստ և արգասանդ բռնապաշտներ պարունակող մի կայսրութիւն: Ով որ այդ միջոցում չի ապրել Գերմանիայում, դժուարութեամբ կարող է գաղափար կազմել հասարակական այն զօրեղ կարծիքի մասին, որը նախ տարտամօրէն, յետոյ յարաճուն յստակութեամբ այս երկրներում գերմանական ապագայ նուաճումների հարցն էր մէջտեղ դնում. տնտեսական պահանջները հզօրապէս նպաստեցին

մտքի այս վիճակի զարգացման. ամերիկեան և անգլիական մըրցակցութիւնը հետզհետէ աւելի վտանգաւոր նկարագիր էր ստանում գերմանական ապագայի համար: Անգլիան իր տիրապետութեան օղակներն էր տարածում այն մի քանի երկրների վրայ, որոնք իր անմիջական ազդեցութիւնից զերծ էին մնում: Գերմանական կայսրը՝ և այն «մեծ զօրութիւնը», որ կազմում են նրա կողքին Բելգի և Համբուրգի նաւագնացութեան երկու վիթխարի ընկերութիւնները, բառացի կերպով փնտռում էին երկրագնդի վրայ այն վայրերը ուր «արևի տակ մի տեղ»-ի նուաճումը հաւանական լինէր: Նրանք կարող էին գտնել միայն Չինաստանը և Թիւրքիան—կայսրութիւններ, որոնք դեռ ևս ուժեղ էին սակայն, և որոնց ձեռք անցնելը հեշտ չէր մանաւանդ նրա համար, որ միւս պետութիւնները պիտի կռուէին մոլեգնաբար գերմանական ձգտումների դէմ: Այնուամենայնիւ արիւրաքար նետուեցին արկածի մէջ: Արեւելքում, ամենից վտանգաւոր հակառակորդը, Ռուսաստանը, համարեա անգոյ էր: Բայց դարձեալ հարկաւոր էր չափազանց խոհեմ լինել. կար Անգլիան, որից պէտք էր ամեն բանի համար վախենալ. հարկաւոր էր խաղաղ նուաճում, բայց այլ հիմքի վրայ, քան այն, որով գործում էին Ռուսաստանը և Ֆրանսիան: Ռուսաստանը, Պարսկաստանում, աշխատում էր կործանել երկիրը՝ նրան տէր դառնալու համար հէնց այն ժամանակ, երբ նա կրնկնէր բացարձակ չքաւորութեան մէջ: Ֆրանսիան «թափանցում էր երկրի մէջ խաղաղօրէն», մտցնելով պաշտօնեաներ և իւրացնելով վարչութիւնը. գործելու երկու եղանակներ, որոնք դատապարտուած էին անյաջողութեան: Գերմանիան հիմնւում էր զուտ տնտեսական նուաճումի սկզբունքի վրայ, առանց քաղաքական կամ վարչական հետեանքների: Գերմանացի շրջիկ-միջնորդը (commis-voyageur) պետական այլապէս հզօր գործակալ, ագէնտ, քան ֆրանսիական հիւպատոսները, պէտք է ուժեղացնէր թիւրք պետութիւնը իր ամբողջ անկախութեան մէջ, ապահովելով հանդերձ Գերմանիայի տնտեսական գերակշռութիւնը:

Կայսրը աշխարհին յայտարարեց իր կամքը, այնուհետև վարելու արեւելեան մի սխտեմատիկ քաղաքականութիւն, կատարելով մի մեծադորդ ճանապարհորդութիւն դէպի Պաղեստին կամ Պոլիս: Այն պրեստիժը որ նա աշխատում էր ձեռք ձգել մահմեդական աշխարհում, կարողացաւ նա միակ հզօր վեհապետն էր, որը արտայայտած լինի երբեք հաւատացեալների պետին. իր բարեկամութիւնը: Եւ նա իր գործողութիւնների կարեւորութեան այն աստիճան գիտակցեց, որ խոյս տուեց, որքան կարելի է, նուազ շեշտելու համար Պաղեստին-

նում քրիստոնեայ միապետի իր նկարագիրը: Մինչև իսկ հրա-
ժարուեց Նազովրեցու նման աւանակի վրայ հեծած Երուսա-
ղէմ մուտք գործելու մտքից—հրաժարում, որը նրա քրիստոնե-
այ սրտին շատ թանգ նստած լինելու է: Ամեն տեղ նա ի-
րան ցոյց տուեց թիւրք իշխանութեան յարգալից բարեկամը և
իր առատաձեռնութիւնները, անհաւատալի բան, թուով էին
նպաստաւորել մահմեդականներին, ի վնաս քրիստոնեաների:

Այն ժամանակ խալիֆայութեան բոլոր մահմեդականներին
հոգում ծագեց մի անհուն սփոփանք: Ամեն տեղ սպասում
էին գերմանական բարեկամութեան շօշափելի բարիքներին,
առանց նոյնիսկ հարց տալու, թէ ի՞նչի մէջ էին կայանում նը-
րանք: Արդ մեծ եղաւ ապշութիւնը, երբ նկատեցին որ ոչ մի-
այն ամեն ինչ մնում էր անփոփոխ՝ առաջուայ նման, այլ և
նոյնիսկ է. Պոլսում գերմանական ազդեցութիւնը, Գերմանիայի
մասնակցութիւնը թիւրքական ազմինստորացիայում և նրա
պաշտօնական ներկայացուցչութիւնը երկրում փոխանակ աւե-
լանալու պակասում էր:

Դա եղաւ Գերմանիայի գերագոյն ճարպիկութիւնը: Նրա
պաշտօնական ներկայացուցչութիւնը և գերմանացիներին մաս-
նակցութիւնը թրքական վարչութեան և ծառայութեան մէջ
պէտք է որ աւելի տկար լինէին, քան միւս պետութիւններինը:
Գերմանական կայսրութիւնը պաշտօնապէս ոչինչ չարեց. նա
չորս կամ հինգ անգամ նուազ ուժեղ ներկայացուցչութիւն ու-
նէր քան իր հակառակորդները: Նա ունի միայն մի գեապանա-
տուն, երկու ընդհանուր հիւպատոսութիւններ Պոլսում և Երու-
սաղէմում, չորս հիւպատոսութիւններ Բէյրութում, Ջմիւռնիա-
յում, Սալոնիկում և Կոնիայում: Բոսֆորում միայն մի պահա-
կանաւ ունի. իր հակառակորդները՝ երկու Մի սպայ՝ մակեդո-
նական ժանդարմերիայի մէջ, որը այնքան հակակրեկի է սուլ-
թանին. և նա էլ բացառապէս Սալոնիկի ժանդարմական ու-
սումնարանական գործերովն է զբաղուած: Եօթը պոստատուն
ունի, և զինուորական մարդիչների թիւը որ ժամանակով լե-
գէօն էր կազմում, այժմ հազիւ տասնի է հասնում: Սուլթանի
ծառայութեան մէջ գտնուող գործակատարները նոյնպէս շատ
սակաւաթիւ են: Մի քանի բժիշկներ, որոշ թուով արուեստաւոր-
ներ, երաժիշտներ և երկու կամ երեք ինժեներներ յայտնի է թէ
անկարող պիտի լինէին ազդելու համար թիւրք քաղաքականու-
թեան վրայ. նրանք վայելում են սակայն սուլթանի մասնաւոր
բարեացակամութիւնը. և այն հռչակաւոր դէպքը պարտիզպանա-
պետի կնոջ, որ մի ուրբաթ օր, սէլամըքից անմիջապէս առաջ,
վրէժխնդրութիւնից դրդուած՝ մի անջնաս, բայց շատ վատահամ-

բաւ սպանութեան փորձ կատարեց հարստահարիչ, ամենակարող Հասան փաշայի վրայ, ցոյց է տալիս, որ սուլթանը գիտէ ժպտալ գերմանական այնպիսի համարձակութիւններ Վրայ, որպիսին չպիտի հանդուրժէր երբէք ուրիշների կողմից:

Գերմանական ազդեցութիւնը չի յենուում ուրեմն Կայզրի գործակալների քաղաքական հաստատ գործունէութեան վրայ: Նա չի շահագործում նոյնպէս այն ինչ որ կարելի էր կոչել մատուոր, իմացական զաղութ... Ֆրանսիայի օրինակը ցոյց տուեց, որ Արևելքում բրիտանացի դպրոցները հակակրօթեամբ են ընդունում միւսիւլմաններին: Եւ որովհետեւ Գերմանիան Թիւրքիայի բարեկամութիւնը պարտական է հէնց այն հակառակութեան, որը միշտ ցոյց է տուել Ֆրանսիական և անգլիական «քաղաքակրթիչ» ձեռնարկների հանդէպ, նա խոյս է տալիս այն բաներից, որոնք նկատում է որպէս սխալներ իր հակառակորդների կողմից: Գերմանական դպրոցները Թիւրքիայում շատ սակաւաթիւ են ուրեմն. հինգ Կ. Պոլսում, որոնցից մինը հրէական. վեց Եւրոպական Թիւրքիայի միացեալ մասում. աշակերտների ընդհանուր թիւը 1056 է միայն: Ասիական Թիւրքիայում 28 դպրոց, որոնց ուսուցման լեզուն գերմաներէնն է. բայց այս թուի մէջ են կաթոլիկ և հրէայ դպրոցները. Աշակերտների թիւը հասնում է 2,398-ի, որոնց մեծ մասը արեւելեան ծագում ունին, մի քառորդը միայն տեղացի բրիտանացիական ծագում: Համարեա ոչ մի մահմեդական աշակերտ: Կարևոր է աւելացնել, որ 10 դպրոց միայն ստանում են պաշտօնական նպաստ ուղղակի կամ անուղղակի կերպով: Մտաւոր գործունէութիւնը ոչինչ է ուրեմն: Գործունէութեան իսկական խարիսխը տնտեսականն է, որը նպատակ ունի աւելի Թիւրք պետութիւնը ուժեղացնելու, քան գերմանացիներին հարստացնելու: Անկասկած գերմանական առևտուրը զարմանալի առաջդիմութիւններ է կատարում, բայց նա հեռու է տիրապետող լինելուց: Նա թողնուած է անհատական նախաձեռնութեան և պաշտօնական օժանդակութիւնը վերապահւում է բացառապէս ընդարձակ թոհիք ունեցող ձեռնարկներին, որոնք ապագայում կոչուած են հեշտացնելու առևտրականների ջանքերը իրանց ամբողջութեան մէջ, ինչ առանց, միևնոյն ժամանակ, աւելացնելու սուլթանի դիմադրական ոյժը ֆինանսական և քաղաքական աղէտների հանդէպ:

Միջագետքի նրկաթուղին

Այս ձեռնարկներից ամենամեծը, վերանորոգուած Թիւր-

քիայի և միևնոյն ժամանակ գերմանական ապագայ ազդեցութեան շրջանակի հիմնաքարը Բաղդադի երկաթուղին է, որ ներկայումս, բանում է արդէն Կ. Պոլիսի և Էրէզլի միջև։ Այս գծի բարերար ազդեցութիւնը հէնց այժմ եւթ աչքի է ընկում։ Թէպէտեւ գծի տնօրէնը՝ Պ. Հիւզընէն՝ մի զուիցեբիացի է և ոչ թէ գերմանացի, բայց շատ պարզ է որ ձեռնարկութիւնը կրում է զուտ գերմանական ոգի։ Թուրք կառավարութիւնը ոչ մի իրաւունք չունի խառնուելու երկաթուղու գործերում։ Նա պարտաւոր է միայն կայարանները ուստիկանութիւնը պահպանելու։ Ծառայողներն ու պաշտօնեաները, ընդհակառակը, աշխատում են բոլորովին գերմանավարի, թէպէտեւ ստուար մեծամասնութիւնը բաղկանում է զանազան ցեղի և կրօնի ընդհանրից։ Թիւրքերից, հայերից, յոյներից, սուրիացիներից, որոնք թւում են ամբողջապէս մոռացած լինել իրանց անհամաձայնութիւններն ու նկարագրի ներհակութիւնը՝ համարեա զինուորական կարգապահութեան առաջ, որը հրապուրիչ դարձուած է կանոնաւորապէս վճարուող ճոխ ոռճիկներով։ Մարդիկը և նրանց համազգեստները մեքուր են. ծառայողների շարժումներն ու ձևերը համարձակ ու խաղաղ են ինչպէս Գերմանիայում։ Ծառայութիւնը կատարւում է բացարձակ ճշդապահութեամբ. երկաթուղու փակոցապահները, քցանների վրայ հսկող մարդիկն անգամ բարեւում են գնացքները զինուորական ձևով։

Ծառայողները հանգստեան թոշակի իրաւունք չունեն, բայց Երկաթուղային Վարչութիւնը հիմնել է հանգստեան թոշակի մի մասնաւոր արկղ, որի գումարի մի մասը ապահովում է ինքը Վարչութիւնը ահագին նուիրաբերութիւններով։ Ուրիշ միջոցներ նպաստում են ծառայողներին կապելու իրանց պաշտօնին. այսպէս, օրինակ, մի ծառայողի աղջիկ, երբ ամուսնանում է մի ուրիշ ծառայողի հետ, ստանում է մի բաւական կլորիկ դրամօժիտ համաձայն երկրի սովորութիւնների։ Այդ եղանակով կամենում են մղել ծառայողներին ամուսնանալու այնպիսի կիներին հետ, որոնք արդէն վարժուած են կայարանի կեանքին, որոնք մեծ քաղաքներից հեռու շատ չեն ձանձրանում և որոնք չեն դրդում իրանց ամուսիններին աւելի զուարթ աշխատութիւններ որոնելու։ Կայարանների մօտ ձրիապէս ծառայողների տրամադրութեան տակ դրւում է նմանապէս որոշ տարածութեան հող, որպէսզի կարողանան բանջարեղէններ և ծաղիկներ մշակել։ Վարչութիւնը բաժանում է նոյնիսկ ծաղիկներն ու հունտերը, և մինչև անգամ ցանկացողներին մատակարարում է փոքրիկ թռչնիկներ—հիանալի գեղձանիկներ։

Ոմանք պիտի հարց տան թէ այդ գեղձանիկները, այդ

ծաղիկները, այդ պարտէզներն ու այդ զինուորական բարենիւրը ինչով կարող են օգտակար հանդիսանալ գերմանական Welt-politik-ին: Բայց նրանք որ ճանապարհորդել են երկրի խո-րերը թափանցող երկաթուղային մեծ գծերի վրայ, լինեն նրանք Եգիպտոսում, Փոքր Ասիայում, Թուրքեստանում կամ Սիրի-րում, ճանաչում են բարոյական այն անհաւատալի ազդեցու-թիւնը որ տեղացի ազգաբնակիւթեան վրայ ներգործում է հա-կապատելերը՝ հանգստաւէտութիւն և կարգապահութիւն բու-րող այդ փոքրիկ, մաքուր դրախտների և իրանց սովորա-կան կենցաղավարութեան անփութութիւնը, զառամութիւնը, կեղտոտութիւնը և խեղճութիւնը: Երջանիկ անցեալից, պար-զապէս մի անկարող աղմինիստրացիայի յանցանքով, սակաւա-մարդութեան, տնտեսական խղճալի դրութեան, ընդհանուր ան-զգայութեան մէջ ընկած երկրներում, բարեբար ազդեցութիւնը անհունապէս աւելի ուժեղ է քան, օրինակի համար, Հնդկաս-տանում կամ Զինաստանում, ուր երկաթուղին ոչինչ չի կարող աւելացնել ազգաբնակութեան անմիջական բարգաւաճման: Եւ պէտք է ասել որ գուցէ կարող է և աւելացնել, եթէ, ինչպէս Բադ-դադի գծի վրայ, օրինակը արուի ընիկների կողմից, որոնք դեռ ևս երէկ, գտնուելով նոյն դրութեան մէջ ինչ որ ուրիշ-ները, այսօր, դառնում են կարգապահութեան և խղճ-ճամիտ աշխատանքի համոզուած առաքեալներ: Այդ երկրնե-րում երկաթուղային կայարանները ճշմարիտ ովասիսներ են, որ ոչ միայն եւրոպացիների հեղաքրքրութիւնն են շարժում, այլ և—և այս է գլխաւորը—ընիկների: Քաղաքակրթիչ ազդե-ցութիւնը անուղղակի է, յամբ, հազիւ նշմարելի, բայց նա չա-րիքը խլում է իր արմատից: Ինչ որ, արդարև, պէտք է ա-պացուցանել ազգաբնակչութեան, այդ նրան հասկացնեն է որ իր դժբաղդութիւնը—և նա դժբաղդ է իսկապէս—առաջ է գա-լիս իր աշխատելու անկարգ սովորութիւններից, և որ միակ միջոցը լաւացնելու իր բարոյական դրութիւնը՝ իր կարողու-թիւնների բնական շահագործումի մէջ է:

... Երկաթուղու վարչութիւնը չի բաւականանում միայն իր հանդիպած ազգաբնակչութեան բարի օրինակներ և ինքնա-զարգացման առիթներ ընծայելով. նա գիտակցօրէն աշխատում է երկաթուղու երկարութեան վերակազմելու մանմեղական մի նոր ազգաբնակչութիւն, որը ապագայում կարող էր դառնալ թիւրք իշխանութեան համար մի անխորտակելի սիւն: Նա ա-մեն կերպով օժանդակում է որ Մակեդոնիայի մահմեդականները երկրի խորքերը գաղթեն: Պէտք էր հաւատալ, որ ինքը՝ թիւրք կառավարութիւնն իսկ պիտի քաջալերէր ու վարէր այդ

շարժումը, որի աջողութիւնը նրա համար ամենամեծ կարևորութիւնն ունի: Բայց նա այդ բանում անկարող հանդիսացաւ: Ճիշտ է, գաղթողները մեծաքանակ գալիս են, մենակ, իրանք իրանց գլխին: Բայց նրանց հաստատովայրը կազմակերպութիւնն այնքան պակասաւոր է, որ նրանք այստեղ աւելի դժբախտ են լինում, քան այստեղ: Այնուամենայնիւ կառավարարութիւնը խորապէս գիտակցում է, որ Բալկանների մահմեդականները, մի օր, անխուսափելի կերպով պիտի մղուեն դէպի երկրի ներսերը և թէ մահմեդականների դրութեան ամրապնդումը Փոքր-Ասիայում, իր ապագայ զօրութեան էական պայմաններից մէկն է: Արդ, ամենահեշտ բանն էր իրագործել այդ պայմանը: Գաղթողները, առ հասարակ, իրանց նախկին բնակավայրերը թողնում են հունձքից յետոյ: Նրանք հասնում են իրանց նոր հայրենիքը ճիշտ ձմեռուայ մէջ: Եթէ անհրաժեշտ բնակարանը, գործիքները, և պարէնը պատրաստ գտնէին, իրանց նոր կեանքը ամենաբախտաւոր հանգամանքների մէջ պիտի դրուէր, որովհետեւ նրանք գալիս են միշտ մի քիչ կանխիկ դրամով: Դժբախտաբար, այն նպաստը որ կառավարութիւնը յատկացնում է այդ շարժման կազմակերպումին ձախող կերպով գործադրուում է, եթէ երբէք չէ հալւում պաշտօնեաների գրպանում: Սրա համար էլ, շատ յաճախ, գաղթողները իրանց խնայողութիւններն ուտելուց յետոյ, մատնւում են մի սարսափելի թշուառութեան և ճգնում են վերադառնալ Մակեդոնիա: Գործերի այս դրութեան մէջ, Երկաթուղու Վարչութիւնը կամեցաւ միջամտել: Նա մշակեց գաղթականութեան մի ամբողջ ծրագիր, առաջարկեց նոյնիսկ ինքը շինել գիւղեր գծի շրջակայքում, գաղթողներին բաց թողնել ընդարձակ վարկեր և իր փողը գանձել հունձքերից յետոյ միայն, մահմեդական գիւղացիների մօտ աւելացած տրամադրելի վաստակից: Թիւրք կառավարութիւնը նախ խանդավառութեամբ ընդունեց այս փառահեղ ձեռնարկի ծրագիրը: Բայց նա այնքան դիւրագրգիռ է օտարների ձեռքով գլուխ բերուած գաղթականական ձեռնարկների վերաբերմամբ, որ վերջին ըուպէին, նա կարծեց այդ բանում տեսնել իր հպատակների կեանքի մէջ օտար ձեռնմխութեան մի փորձ: Եւ վերջի վերջոյ պատասխանեց, թէ առ այժմ նա չէ կարող ընդունել առաջարկը, պատրուակելով՝ որ նա չի ցանկայ որ քրիստոնեաները մահմեդականների վրայ երախտապարտութեան իրաւունքներ ձեռք բերեն: Ներկայումս, երկաթուղին և—կարիք կմայ աւելացնելու—Գերմանիան աշխատում են սուլթանին ապացուցել, որ հարցը ոչ երախտագիտութեան իրաւունքներ վաս-

տակելուն և ոչ ազմիրնիստրացիայի վրայ ձեռք դնելուն մէջ էր, այլ տնտեսական կեանքի ուժեղացման մէջ, որը իր հերթին պիտի նպաստաւորէր ոչ միայն ազդաբնակութիւնը, այլ և ամենից առաջ և ուղղակի թիւրք պետութիւնը: Մի կողմից, արդարեւ, երկաթուղու հասոյթները պիտի աւելանային և հետեւեալ պիտի պակասեցնէին նոյն չափով պետութեան կողմից, իբրեւ շահու ապահովութիւն, երկաթուղու վարչութեան վճարելի գումարը: Միւս կողմից, թիւրք կառավարութեան գանձային սիստեմը բացարձակապէս հիմնուած լինելով մաքսային հասոյթների, կալուածային տուրքերի և մենաշնորհների վրայ, իւրաքանչիւր մշակուած նոր հողաբաժինը, ներմուծուած բամբակի իւրաքանչիւր հակը, նուազ դժբաղդ մի ազգաբնակչութեան կողմից աւելի սպառուած աղի կամ ծխախոտի իւրաքանչիւր քաշը՝ պետութեան պիտի կարողանար տալ մի անմիջական շահ: Եւ որովհետեւ սոսկ Ֆինանսական դժուարութիւններն են որ փորում են թիւրքիայի հիմքերը, սուլթանի իշխանութեան ուժեղացումին ուղղակի օգնած պիտի լինէին կազմակերպելով գաղթականութիւնը բանական խրիսիանների վրայ: Արդ, թէպէտեւ սուլթանը դեռ ևս վարանում է յանձնել «օտարներին» գաղթականութեան գործը, բայց ամեն կողմից սպառնացող բարդութիւնները կարծես արդէն նրան մղում են գործողութեան կատարեալ ազատութիւն տալու նրանց, որոնք յաւակնում են նրան փրկել: Եւ սակայն այս ձեռնարկի քաղաքական բնաւորութիւնը անուրանալի է:

Նա, այդ քաղաքական բնաւորութիւնը՝ պիտի բոլորովին պարզ երևայ, երբ շարունակուի երկաթուղային գիծը Միջագետքի միջով: Շինուած, պատրաստ գծի կտորն իսկ ցոյց է տալիս արդէն, որ խնդիրը իսկապէս մի քաղաքական գծի մասին է, այլապէս հզօր, քան, օրինակի համար, սիբիրական գիծը: Գերմանացի ինժեներ Մաքենզէն՝ իր միջազգային սպայախմբի հետ համախորհուրդ՝ կառուցել է գիծը համաձայն գերմանական սկզբունքների: Երկաթուղու գոտիները (traverse) երկար չեն և երկաթից են (ծանրութիւն—53-3 կիլոգրամ, անջրպետ—0,80 մետր): Գծերը նոյնպէս շատ աւելի ուժեղ են քան սիբիրական երկաթուղունը (երկարութիւն—12 մետր. ծանրութիւն—37, 25 կիլ. իւրաքանչիւր մետրի համար): Մի խօսքով ուղին շինուած է այնպէս որ կարող է իր վրայ կրել ժամում մինչև 120 կիլոմետր արագութեամբ երթեկող ծանր գնացքները: Կամուրջները շատ հաստատուն են, շինութիւնները ամուր: Ամեն տեղ նկատուում է մասնաւոր կարգադրութիւնների ներկայութիւնը (գերմանականի նման) ձիերի և թնդանօթների Յուլիս, 1905.

փոխադրութեան համար: Եւ կառուցանելի գծերը պիտի ներկայացնեն նոյն մասնաւոր հանգամանքները:

Արդ, և սա մի շատ կարևոր դիտողութիւն է, այս գծի շինութեան աշխատող բանուորները՝ այլազան ժողովուրդներէրից, ինչպէս քուրդ, հայ, թիւրք ևայլն, ոչ միայն իրանցից պահանջուած աշխատանքին իրանց բացարձակապէս ընդունակ ցոյց տուին, այլ յայտնի անհամաձայնութեան մի շատ կարճ շրջանից յետոյ, կողք կողքի ապրեցին ամենաբարեկամական կապերով, երբ տեսան որ նրանցից և ոչ մէկը իր ցեղի և կրօնի զանազանութեան պատճառով՝ չէր զրկուած ի նպաստ միւսներին: Գերմանիան այս փաստից քաղեց՝ մի այնպիսի եզրակացութիւն, որ դատապարտում է սուլթանին: Գերմանիան եզրակացրեց, արդարեւ, որ կրօնական և ազգային այն աղետաբեր անհամաձայնութիւնները, որ պատառ պատառ անում, տկարացնում են երկիրը, պիտի անհետանային կարծես հրաշքով: Ի՞նչոք որ այդ ժողովուրդները արդիւնաբեր աշխատանք և հաստատ շահ գտնէին: Ի հարկէ, երկաթուղին այդ բանի ամենայարմար միջոցը պիտի լինէր:

Թիւրքական զօրութեան կողքին, գերմանական շահն էլ անտես չէ առնուած: Բաղդադից մինչև Բասրա և վերջապէս մինչև Կուէյտ (Պարսկական ծոցի վրայ) գծի երկարումը միայն թիւրքիայի համար պատերազմական, և հետեւաբար, բարոյական առաջնակարգ կարևորութիւն ունեցող մի գործ չպիտի լինի. նա տէր պիտի դարձնէ նաև Գերմանիան սաղմնային դրութեան մէջ գտնուող այն հարստութիւններին, որ թագցնում են իրանց ծոցում այդ երկրները, ինչպէս նա և դէպի Հնդկական ովկեանոս տանող առաջին ճանապարհին:

Ռուսաստանի և Անգլիայի երկար ընդդիմութիւնը յետաձգեց միայն գործի կատար ածումը: Նրանք այժմ անկարող են այլևս արգելք հանդիսանալու Ներկայումս Ռուսաստանն, արդարեւ, ոչ մի կշիռ չունի, և այն շահախնդիր բարեկամութիւնը որ նրան ցոյց է տալիս Գերմանիան՝ իր արդար վարձատրութիւնը պիտի ստանայ այն պաշտպանութեամբ, որ Ռուսաստանը այսուհետև պիտի շնորհէ այդ գերազանցապէս հակ-անգլիական ձեռնարկին: Գալով Անգլիային՝ այդ գծի շինութեան մասնակցելուց հրաժարուելով՝ մի անսահման սխալ գործեց: Երկաթուղու վարչութեան մէջ մի բաժին ձեռք բերելով՝ նա պիտի կարողանար, իրա համար այսպէս ասած՝ մի «Վրանցք բանալ» դէպի ստացուելիք առաւելութիւնները: Հակառակուելով նա իրան յայտարարեց Գերմանիայի անդրդուելի թշնամին:

Գերմանական ժողովուրդը որ, էտպէս, տարածուելու քա-

դաքականութեան հակառակ է, և որ հրաժարուով է Գերմանիայի կողմից պաշտպանուող թուրք համիսլամութեան մէջ տեսնել իր ապագայի ամենակարևոր գրաւականներէ մէկը, կամաց-կամաց ընտելացաւ, շնորհիւ մի՛ որքան ճարպիկ, նոյնքան հետաքրքրի պրոպականդայի, «Գերմանական Միջագետքը» որպէս մի ցանկալի իդէալ նկատելու մտքի հետ: Գերմանիայում միջին դասակարգները հետաքրքրուով են փիլիսոփայական և պատմական հարցերով այն աստիճան, որ կարող է ապշեցնել պարիզցիներին: Վիլհելմ Ու-ը հիանալի կերպով շահագործեց ժողովրդի գիտական այս հետաքրքրութիւնը: Նա իր ժողովրդի առաջ վերակենդանացնել տուեց վաղեմի Միջագետքը: Զգուշացաւ ծանրանալու թիւրքական ուժի մի բացասական կողմերի վրայ: Նա չաշխատեց ապացուցանելու, որ Միջագետքը՝ դեռ ևս Վ-րդ դարում, արտադրում էր համարեա նոյնքան հացահատիկ, որքան ժամանակակից Գերմանիան և որ, ուռգման երկու հին ջրանցքների նորոգութեամբ կարելի էր նոյն արդիւնքը ձեռք բերել և մօտաւոր ապագայում: Նա դիմեց աստուածաշնչական քննադատութեան և ասորական պատմութեան՝ շահելու համար գերմանացիներին Weltpolitik-ի դատին: Ասորբանութիւնը, Գերմանիայում, համիսլամութեան ամենահզօր գործօններից մէկն է: Պրոֆէսօր Դէլիցշի աշխատութիւններն ու դասախօսութիւնները Ասորեստանի հետ աստուածաշնչական կապերի և Միջագետքի քաղաքակրթութեան զարգացման մասին, անհունապէս աւելի մեծ գործ տեսան: Համմուրաբիի նման անուններ, որ առհասարակ ինտելիգէնտ ֆրանսիացուն անգամ անծանօթ է, Գերմանիայում, ամենքի շրթների վրայ ման էին գալիս: Անմիտ թերթօն-վէպերի փոխարէն, գերմանական մեծ լրագիրները իրանց ընթերցողներին տալիս էին ասորբանութիւնը խելացի կերպով ժողովրդականացրած: «4000 տարի առաջ գոյութիւն ունեցող բանկային մի տան պատմութիւնը», «Ասորեստանցի մի նպարավաճառ», զուարճալի հետադատութիւններ Համմուրաբիի օրէնսդրութեան մասին և նման օրինակ անթիւ նիւթերի վրայ զանազան գրուածքներ գերմանական ժողովուրդը ընտանեցրին Միջագետքի հետ: Վերջի վերջոյ ժողովուրդը սերտօրէն ու անկեղծօրէն շահագործուեց: Դրանից յետոյ մի քայլ է ֆուրտ հասկանալու և յարելու քաղաքական այն սխտեմին, որի թունդ պաշտպանն է Վիլհելմը: Անկասկած, մասնաւոր հանգամանքներ շուտով այդ քայլն էլ առնել կը տան ժողովրդին, դուցէ և անգիտակցօրէն:

Թիւրք-գերմանական համիսլամութիւնը

Հարկաւոր է շեշտել, որ Թիւրքիայում և Գերմանիայում ցայց տրուած գործունէութեան այս կրկնակի եղանակը՝ գերմանական գերակշռութիւնը հաստատելու համար Բոսֆորի և Պարսկական ծոցի միջև, իսկապէս ոչ մի հողային նուաճման չի ձգտում: Ընդհակառակը, Թիւրք կայսրութիւնը պէտք է աւելի քան երբէք ուժեղ, աւելի քան երբէք հարուստ դառնայ, օգտակար լինելու համար Գերմանիային. նա պէտք է աւելի քան երբէք տիրապետող դիրք ստանայ մահմեդական աշխարհում, գոնէ խոչընդոտ հանդիսանալու համար անգլիական պետութեան հրաշալի զարգացման:

Թիւրքիայում, Գերմանիայի երկրորդ մեծ գործը միեւնոյն նպատակն ունի: Դամասկոս-Մեկկայի երկաթուղին՝ Միջագետքի գիծի նման, չի կարող Գերմանիային խոստանալ պրեստիժի, հմայքի յաւելում կամ տնտեսական ուղղակի շահեր: Այդ երկաթուղին համիսլամութեան մայր երակն է գերազանցօրէն: Դա Թիւրք ազգային մի գործ է, մահմեդական քաղաքականութեան մի գործ, այնպէս ասած՝ Իսլամի քաղաքական վարչապետութիւնը շօշափելի դարձած երևոյթ.—մահմեդականների միութիւնը մի միակ պետի, խալիֆայի իշխանութեան տակ: Դա այն գործն է նոյնպէս, որի կատարեալ յաջողութիւնը մի մահացու հարուած պիտի լինի բրիտանական համիսլամութեան, լորդ Կրըգլընի ենթադրական կայսրութեան, և առհասարակ, անգլիական գերիշխանութեան համար Արևելքում: Արդ, անհրաժեշտ է նկատել, որ այս խիզախ ձեռնարկութեան միտքը հէնց ինքը Գերմանիան է որ ներշնչել է սուլթանին, կամ աւելի ճիշտ, նախ Իզզէթ փաշային: Հանրային Պարտքերի Վարչութեան մէջ Գերմանիայի ներկայացուցիչը, պ. Տէստա, մասնաւորապէս զբաղուել է այս ծրագրով: Գերմանիան ցանկանում էր սակայն որ նրա իրագործումը զուտ թրքական և պարզապէս մահմեդական բնաւորութիւն կրէ: Նա բաւականացաւ տեխնիքական խորհուրդներ տալով և գծի շինութեան համար յանձնարարելով երկրաչափ, ինժեներ Մէյսներին: Աւելի քան 2,000 կիլոմետր երկաթուղի կառուցանելու միտքը, և այն էլ մեծ մասամբ աւազուտ անապատների և այնպիսի գաւառների միջով, ուր բնակւում են համարեա կատարելապէս անկախ բեդուիններ (աւրաբներ), առաջին ըստ էին ժպտում երբէք Թիւրք կառավարութեան: Բայց բարոյական և ֆինանսական առաւելութիւնները անսահման էին թւում: Սրբազան վայրերին ուխտագնա-

ցութիւնները, որ ամեն բանից աւելի շփման մէջ են պահուած զանազան երկրների մահմեդականներին և վերակենդանացնում են հաւատացեալների քաղաքական միութեան սկզբունքը, ոչ միայն հեշտացած կը լինէին, այլև, այսպէս ասած՝ կը ղեկավարուէին հէնց խալիֆայի ձեռքով։ Երթևեկութիւններից գոյացած ահագին հասոյթը՝ դանձարանի համար ակնյայտ օգուտներ պիտի տար։ Իսլամական ամբողջ աշխարհի հոգևոր իշխանութիւնը՝ նորից պիտի կենտրոնանար սուլթանի ձեռքով։

Թիւրք կառավարութիւնը լաւ հասկանալով թէ ինչո՞ւ Գերմանիան չէր կարող ֆինանսապէս օժանդակել ձեռնարկութեանը, թախանձագին կոչ արեց հաւատացեալների առատաձեռնութեան։ Անլո՛ւր բան. ահագին դրամադուլաներ հոսեցին, Կ. Պոլիս, ամեն կողմից. և ինչ որ աւելի տարօրինակ է, գործադրուեցին նպատակին անխարդախօրէն։ Գերմանիան՝ ձեռնարկի կատարածման նպատեց հետեւել կերպով. Հանրային Պարտքերի վարչութեան մէջ ընդգրկութիւն չարեց մի նոր տուրքի՝ «Հիշագի համար դրօշմաթուղթ»-ի ստեղծման, որի դէմ զօրեղապէս բողոքում էին միւս պետութիւնները, բայց ի հարկէ, ապարդիւն կերպով։ Մեկկայի երկաթուղին գտաւ այսպէս հասոյթի մի կանոնաւոր աղբիւր։ Տնտեսական աշխատեցին։ 1904-ի աշնան, առաջին հինգ հարիւր քիլոմետրը՝ Դամասկոսից-Ման, արդէն պատրաստ՝ բացուեց երթևեկութեան առաջ։ Եւ, ինչպէս յոյս ունեն Կ. Պոլսում և Բերլինում, եթէ ամբողջ գիծը, մինչև Զիդդա, Մեկկայի նաւահանգիստը Կարմիր ծովու վրայ, իզգէթ փաշայի եռանդուն տեսութեան տակ գլուխ հանուէր նախ քան 1907 թուականը, թիւրք-գերմանական համախառնութիւնը Մեծ-Բրիտանիայի համաշխարհային քաղաքականութեան վրայ վճռական յաղթանակ կը տանէր։

Կ. Պոլսի սուլթանի և Մարոկկոյի սուլթանի միջև հէնց նոր կայացած հաշտութիւնը ամբողջապէս բնորոշում է մահմեդական աշխարհի ներքին կազմակերպութեան այս զօրեղ զարգացումը։ Մինչդեռ Ֆրանսիան՝ Մարոկկոյում և Անգլիան՝ Արաբիայում շարունակում են քանդել հիմքերը իսլամի անկախութեան՝ որ մարմնանում է այդ երկու վեհապետների քաղաքական և կրօնական իշխանութեան մէջ, Գերմանիան, իր ամենաճարպիկ դիւանագէտի՝ Մարշալ ֆոն Բիբերշտայնի դեսպանի բերանով կարողացաւ համոզել խալիֆային, թէ անհրաժեշտ է, մահմեդական միութեան խորանի վրայ զոհաբերել իր հպարտութեան մի մասնիկը։ Եւ սուլթանը պիտի ուղարկէ մի առանձին պատգամաւորութիւն հէնց նրան, որ կոչւում է ինչպէս ինքը՝ Հաւատացեալների էմիր և որը չէ դադարել բնաւ

իրան դատապարտելուց իբրև ուզուրպատորի, յափշտակչի: Անգլո-ֆրանսիական ընդհանուր վտանգի առաջ, երկու դեռ ևս անկախ մահմեդական վեհապետները՝ Գերմանիայի հովանու տակ, ձեռք ձեռքի են տալիս, հաստատելով այսպէս, թէ Մարբակէշից մինչև Բասրա մի հատիկ գաղափար պէտք է նորից ոգևորէ իսլամը, ինչպէս Հարուն էլ Ռաշիդի ժամանակ—ինքնապաշտպանութիւն անհաւատների դէմ...

Անկասկած, առաջ բերուած փաստերը մատնանիշ են անում այն անագին պարտականութիւնը, որ յանձն է առել Գերմանիա և այն ճարպիկութիւնը որ նա ցոյց է տալիս կատարելու համար իր այդ պարտականութիւնը վերին աստիճանի դժուար հանգամանքներում: Բայց այդ զգալ է տալիս և այն, թէ այս պահը գերագոյն բուպէն է, ուր կարելի պիտի լինի Weltpolitik-ը փրկել բացարձակ ձախողանքից: Գերմանական և անգլիական ձեռնարկութիւնների անհաշտութիւնը ամեն օր աւելի ու աւելի աչքի է խփում: Անգլիան իր կողմից պատասխանեց սկզբունքի այն հարցին, որ տալիս էր Գերմանիան.—Աշխարհը՝ բրիտանական կայսրութեան նման երկու կայսրութիւն պարունակելու չափ մեծ չէ: Եւ հետզհետէ աւելի վտանգաւոր դարձող եռանդով՝ նա կռոււմ է Գերմանիայի ձգտումների դէմ մահմեդական աշխարհում: Իր տեսակէտով, Անգլիան անկասկած իրաւունք ունի: Բայց նոյնքան իրաւունք ունի և Գերմանիան: Նա տեսնում է, Անգլիայի կողմից ամեն օր անխնայ կերպով իր երազների շէնքին հասցրուած սարսափելի հարուածների արդիւնքը — Միջերկրականի Դռների կորուստը համարեա մի անդառնալի իրողութիւն է, մի fait accompli: Մարոկկոյից նրա դուրս գըլլուելը, իր անմիջական հետեանքով՝ Արևելքում գերմանական պրեստիժի ջնջումով՝ նոյնպէս մի կատարուած իրողութիւն է: Իսլամի սրբազան վայրերը՝ սուլթանի տիրապետութեան տակից հանուելու վրայ են, շնորհիւ Նմէնում ծագած ապստամբութեան, որը Զիրուտիից զէնքեր է ստանում և որին բարեացակամ աչքով է նայում Անգլիան: Եւ գերմանական Weltpolitik-ի համար այս ծանրակշիռ կացութեան մէջ իսկ, Անգլիան բացարձակ և «վերջնապէս» գրաւում է Միջագետքի երկաթուղու ապագայ տէրմիւսուը, աւարտման կէտը, Կոնէյտը, զինուորական մի շահատակութեամբ:

Գերմանիան գտնուում է ուրեմն, իր համաշխարհային քաղաքականութեան տեսակէտից, մի այնպիսի դրութեան մէջ, որից դուրս գալու համար ստիպուած է գերագոյն միջոցներէ դիմելու: Ռուսաստանի անկումը նրան չէ ազատում դժուարու-

թիւններէց: Իրականութիւնը աւելի քան երբէք ծանրակշիռ է: Կարող է միմիայն իր խօսքի ուժով իրերէ դրուծիւնը փոփոխել: Նա բողոքում է Մարոկկոյից արտաքսուելու դէմ. աշխատում է մահմեդական աշխարհի միացման դործին. պիտի ընդդիմանայ և Կուէյտի գրաւման: Աշխարհը կարծում է որ նա այդ ամենը անում է պարզ յոխորտանքի համար. մի օր պիտի ըմբռնէ սակայն որ այս մասնաւոր դէպքերի ետև թաղնուած է Արևելքում գերակշռութեան սարսափելի ինդիքը:

Միայն, եթէ Հեռաւոր-Արևելքի դէպքերի բերմամբ, Մարոկկոյում և այլուր անգլո-ֆրանսական համագործունէութիւնը դադարէր, և եթէ Ֆրանսիայի իմաստութիւնը Գերմանիային խնայէր Մարոկկոյում մի կատարեալ պարտութիւն և մահմեդականների մէջ նրա պրեստիժին հասցրուած հարուածը, կարելի էր հանգստութեամբ նայել կացութեան վրայ, որովհետև այն ժամանակ Գերմանիան կը կարողանար շարունակել իր գործը Արևելքում. նա ինքնիրան դրուած չէր գտնի դեռ անել շաւղի մէջ: Բայց եթէ նրան այդ շաւղի մէջ բանտարկէին— և այստեղ ես պարզում եմ գերմանական կառավարող շրջանակների հայեցակէտը—նա անկարող կը լինէր, քսան տարուց ի վեր պատրաստած իր ապագայի յաջողութեան համար, հարկաւոր զոհողութիւններից խոյս տալու. նա ղէնքի ուժով կը յարձակուէր այն պատի դէմ, որը անել է դարձնում ճանապարհը, որ տանում է նրան դէպի «Արեգակի տակ մի տեղ»:

Ահա այս է Գերմանիայի և Անգլիայի ներկայ դրութեան մասին տխուր ու ահաւոր ճշմարտութիւնը: Բայց ի՞նչին է պէտք Ֆրանսիայի որ...